

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարեկանը 6 ռուբլ
Առանձին համարները 5 կոպեկով:
Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:
Օտարաբաղադրացի դիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Мшак“.

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):
Ցատարարութիւն ընդունում է ամեն լեզուով:
Ցատարարութիւնների համար վճարում են
իրաքանիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Հայերը և քրիւղերը:— Ներքին տեսու-
թիւն: Նամակ Գորուց: Նամակ Խմբագրին:
Ներքին լուրեր:—Արտաքին տեսու-
թիւն: Թիֆլիս: Ֆրանսիա: Սնդիկատ: Նամակ Պարսկա-
ստանից:— Մշակիչ: Հեռագրիչներ:—Ցատարարու-
թիւններ:

ՀԱՅԵՐԸ ԵՒ ՔՐԻՒՂԵՐԸ

Դարերով ապրում են թիւր-
քաց հայերը քրիւղերի հետ մի
երկրում,— և մինչև այժմ ոչինչ
բարոյական ներգործութիւն չը
կարողացան ունենալ այդ վայ-
րենի ցեղի վրա: Դարերով քր-
իստոնեայ այդ միակ ազգը Ա-
սիայում ապրում է բարբարոս-
ների մէջ և մինչև այժմ ոչինչ
բարոյական ներգործութիւն չը
կարողացաւ ունենալ իրան շր-
ջապատող բարբարոսների վրա:
Երբ քրիւղերը զինաւորվում
են, սկսում են յարձակվել հա-
յերի վրա, սկսում են աւերել
նրանց գիւղերն ու քաղաքները,
սկսում են կոտորել հայ ազգա-
բնակութիւնը,— հայերը սկսում
են ազդակել, բողոքել...

Իսկ երբ խաղաղ ժամանակ
է գալիս, հայերը դարձեալ ո-
չինչ ջանք չեն անում քրիստո-
նէութիւնը և քաղաքակրթու-
թիւնը տարածելու իրանց ճըն-
շողների մէջ, որպէս զի քաղա-
քակրթեն նրանց, մեղմացնեն
նրանց բարք ու վարքը և այս-
պիսով ապագայում ապահովաց-
նեն իրանց սեփական խաղաղ
գոյութիւնը:

Հայը ունի մի մեծ պակա-
սութիւն. նա չը գիտէ ներգոր-
ծել իրան շրջապատող ցեղերի
վրա, այլ ընդհակառակն ինքն է
ենթարկվում իր հարևանների
ազդեցութեանը, որքան ստոր էլ
լինեն նրանք իրանց մտաւոր
զարգացմամբ: Հայոց ազգու-
թիւնը անընդունակ հանգիստ-
ցաւ հայացնել քրիւղ բար-
բարոս աւազակներին, հայոց
քրիստոնէութիւնը անընդունակ
կղաւ դարերի ընթացքում մի-
օն արական ոգով աւետա-
րանի լոյսը տարածել իրան
շրջապատող, իրան ճնշող, իրան
հարստահարող, իրան անպատ-
ող, իր ազգութիւնը քանդող
վայրենիների մէջ...

Եւ ահա սրա հետևանքը:
Քրիւղը մնաց նոյն բարբարոս
աւազակը, նոյն անգապելի վայ-
րենի գազանը, ինչ որ էր մի

քանի դար սրանից առաջ: Քր-
իստոնէութիւնը, այդ գորեղ,
քաղաքակրթիչ ոյժը, կորցրեց
իր նշանակութիւնը հայոց ազգի
ձեռքում:

Հայոց ամբողջ հոգ հպարտակ
պարով էր. նա թիւրքանում էր
թիւրքերի մէջ, քրդանում էր
քրդերի մէջ:

Հոգեւորականութիւնը նեղհա-
յեաց, մոլեռանդ էր, նա բոլո-
րովին զուրկ էր քրիստոնէական
պրօպագանդայի ոգուց, նա պիղծ
էր համարում մօտենալ մահմե-
տականին, ընդունել նրա դա-
ւակներին իր դպրոցի մէջ, պիղծ
էր համարում աւետարանի ճշ-
մարտութիւնը քրիւղին բացա-
տելու:

Ունեւոր դասը ետական և շա-
հասէր էր: Նա իր ոսկու քսակ-
ների վրա նստած, անտարբեր
էր մնում դէպի ազգի ցաւերը:

Եւ իսկապէս մենք ի՞նչ իրա-
ւունք ունենք վրդովել, որ Ար-
պան արհամարհանքով է վերա-
բերվում դէպի մի քրիստոնէա-
կան ազգութիւն, որ դարերի
ընթացքում չը կարողացաւ հո-
գալ իր մասին, չը կարողացաւ
ինքն իր համար աւելի բարձր
ապագայ պատրաստել, անընդու-
նակ լինելով բարոյապէս ներգոր-
ծել քրիստոնէութիւնն ու աւե-
տարանը տարածելով իրան շր-
ջապատող բարբարոս վայրենի-
ների մէջ...

Ոչինչ չեն արել և ամեն ան-
գամ դողում են, երբ մի հարիւր
քրիւղ վեր են կենում, միանում,
զինաւորվում են և սկսում են կո-
տորել անձնապաշտպանութեան
զգացմունքից զուրկ այդ ողոր-
մելի ազգութիւնը:

Խաղաղ ժամանակ, դարերի
ընթացքում, քրիստոնէութեան
լոյսը տարածել վայրենիների մէջ,
— դա անձնապաշտպանութեան
նշան կը լինէր: Բայց հայը իր
ամբողջ պատմութեան մէջ ազ-
գային ինքնաձանաչութեան զը-
գացմունքից զուրկ լինելով, զուրկ
էր միշտ և անձնապաշտպանու-
թեան զգացմունքից:

Երբեք ևս կարողացին լրա-
գիրների մէջ, որ թագաւոր
Կայսրը թող է տուել Ռուսաս-
տանում կազմելու մի ռուսադա-
ւան միսիօնարական ընկերու-
թիւն:

Գոնէ օրինակ առնելէնք ռու-
սներից: Իսկապէս յիսուն, քսան
և հինգ տարի սրանից առաջ

պէտք է այդ մասին մտածէինք:
Բայց լաւ է ուշ, քան թէ եր-
բէք: Գոնէ հիմա մտածէինք
կազմել մի հայկական միսիօ-
նարական ընկերութիւն, որ նը-
պատակ ունենար հայոց լեզուով
քրիստոնէութեան լոյսը տարա-
ծել Փարս-Ասիայի և Հայաս-
տանի վայրերի ցեղերի մէջ:

Միշտ Արօպայի վա յոյս
դնել, թէ նա կօգնի թիւրքաց
Հայաստանին,— դա ցնորք է:
Պէտք է հայերը իրանք իրանց
օգնեն: Իսկ ուրիշ ի՞նչ միջոց կ'ոյ
զսպելու զանազան արիւնարբու
Իբադուլլահ շէյխերին, Բահրի-
բէգերին և նրանց նման մոլե-
ռանդ գազան ամբողջ, եթէ ոչ
քրիստոնէութիւնը նրանց մէջ
տարածելով:

Այդ տեսակ հայոց միսիօ-
նարական ընկերութեան կազմելը
Լճմիաձնի, հայոց լուսաւորչական
եկեղեցու կենտրոնի, պարտաւո-
րութիւնը կը լինէր,— բայց մենք
վաղուց է արդէն ոչինչ յոյս չու-
նենք և չենք կարող ունենալ դէ-
պի ազգային շահերը աւտարբեր
Լճմիաձնից:

Դուք վրդովվում էք բոլորա-
կանների մասին, թէ նրանք մի-
սիօնարութիւն են անում: Բայց
ո՞վ է մեղաւոր որ դուք նոյնը
չէք անում, ո՞վ էր արդելում
Լճմիաձնին փոխանակ դարերով
անգործ մնալ, կազմել լուսաւոր-
չական եկեղեցուց մի միսիօնա-
րական ընկերութիւն, սաստիկ
մրցութիւն անել բողոքականու-
թեանն ու կաթօլիկութեանը և
տարածել լուսաւորչական եկե-
ղեցու ձեռքով աւետարանը Հա-
յաստանի վայրերի ցեղերի մէջ:

Դարձեալ մենք յոյս չունենք
որ Լճմիաձնի գոնէ այժմ կը
հասկանայ իր պարտաւորութիւ-
նը: Բայց եթէ քրիստոնէութիւ-
նը, աւետարանը և նրա միջոցով
ուսում չը տարածվի գազան
քրիւղերի մէջ, հայերը թիւրքաց
Հայաստանում միշտ գո՞հ կը լի-
նեն քրիւղերի բարբարոսութեան:
Եթէ մի ազգ ինքն չէ կա-
մենում անհետանալ ուրիշից կը-
լանվելով, նա պէտք է աշխատի
ուրիշին կլանել:

Բայց եթէ լուսաւորչական
եկեղեցու հոգեւորականութիւնը
ոչինչ չէ անում, ինչի նոյն ե-
կեղեցուն պատկանած աշխար-
հականները չեն կազմում մի
հայոց միսիօնարական ըն-
կերութիւն, լուսաւորչական կը-

րօնը քիւղ բարբարոսների մէջ
տարածելու համար, կամ գոնէ,
ինչպէս մենք մի քանի անգամ
առաջարկեցինք, Ռուսաստանի
սահմաններում բնակվող քրիւ-
ղերի և հայ մահմետականների
մէջ...

Յոյց տանք որ մենք էլ նոյն-
քան ոյժ և գուցէ աւելի էլ ու-
նենք, քան թէ հայ-բողոքական-
ները, որ մենք նրանց յաղթել
կարող ենք այդ ասպարէզի մէջ:
Եթէ ոչ դարդակ զանգատներով
ու հայհոյանքներով բողոքական-
ների դէմ բան չի դառնայ...

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳՕՐՈՒՑ

Սեպտեմբերի 20

Սեպտեմբերի 16-ին Գորու յաջորդը, Գրիգոր
Գառնակերեանց վարդապետը մեկնեցաւ այստե-
ղից դէպի Հին-Նախիջևան: Հայր սուրբը նախ քան
թողնի մեր քաղաքը, ուր եկեալ տարի մնաց, մի
քարոզ կարդաց սուրբ Աստուածածնի եկեղեցւում
կիրակի օրը Ս. Խաչի վերացման տ'նին, իր հու-
վեալ ժողովրդին: Բազմութիւնը բաւականին շատ
էր. քարոզիչը խոսում էր հայերէն, բայց որովհե-
տե Գորու հայերը չեն հասկանում իրանց մայրնի
լեզուն այդ պատճառով քարոզը թարգմանում էր
միացիլէն լեզուով Նիլոյէ քահանայ Տէր-Սահա-
կեանցը: Թարգմանութիւնը այնպէս էր, որ ունկն-
դիրները նոյնքան հասկանում էին թարգմանողի
խօսքերը, որքան նոյն իսկ վարդապետի քարոզը:

Քարոզիչը հազար ու մէկ անգամ կրկնելով մի
և նոյն բանը, անդադար յայտնում էր այն միտքը,
թէ Գրիստոսի աշխարհ գալու պատճառը ոչ այլ
ինչ էր եթէ ոչ մարդկանց սատանայի ձեռքից
փրկելը. իրաւ մարդիկ հետևելով Ս. Աւետարանի
խօսքերին փրկվեցան շատ չարքներից, բայց ինչ-
պէս երեւում է մեր ծիսական երկստեղ զարդերի
անմխիթար դրութիւնից, դեռ մնացել են շատ
սատանաներ, որոնց ձեռքներից դեռ եւ ազատ-
ված չենք, և յայտնի չէ թէ երբ պիտի ազատ-
վենք: Քարոզիչը խոսում էր ոգեւորված և յիշում
էր ժողովրդականներին, որ նա թէև բաժանվում
է, հեռանում է նրանցից, բայց երբէք մոռանալու
չէ նրանց, վասն զի նրանց մօտ հաց է կերել,
մի բաժակ առաջ ունի: Եւ իմեք, պնդում էր քարո-
զիչը, սէր և յարգանք է վայելել: Ումից,—յայ-
տնի չէ...

Հայր սուրբը թող ապագով լինի, մենք եւս նմա-
նապէս մոռանալու չենք նորան երբէք: Եւ ինչպէս
կարող ենք մոռանալ, ով որ կը մտնի Ս. Աս-
տուածածնի եկեղեցու դարիցը և կը տեսնի մեր
քանդված երկստեղ զարդերը, ով որ կը տեսնի
նրանց աւետարանները, նա անմխիթապէս կը յիշէ ան-
խոնջ վատակ ու քաջագործութիւնը Հ. Գառնա-
կերեանցի. այդպիսի հետքերը շուտ չեն ջնջվում
և չեն մոռացվում:

Ցանկալի է որ և Նախիջևանցիների զարդերը
չը քանդվեն այնպէս, ինչպէս դժբաղդաբար քանդ-
վեցան մեր զարդերը. հայր Գառնակերեանցին
կը ցանկանամ խաղաղը չը դառնալ մի քանի
չարամիտ մարդկանց, որոնք անպակաս գտան-
վում են ոչ թէ միայն Գորում, այլ և ամենայն տեղ:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Դուշեթ, 28 սեպտեմբ.

Ձեր «Մշակ» լրագրի 152 համարում Դուշեթից մի պարոն յարձակվելով մեր քաղաքի գործակալ Կեդրո քահանայ Բեգլիանեանցի վրա՝ շոշափում է նրա պատերը։ Անձանօթ մարդն անգամ ուշադրություն կը դարձնէ ան գրուածքի վրա, ամեն մէկ պարբերութեան մէջ կը նկատէ մարդկային խղճմանը և գրուածքի և թշնամութիւն։ Ուստի անձանօթ ընթերցողները կարծիքներ փարատելու համար, պարտք ենք համարում քանի մի խօսքով արդարութիւնը վերականգնել։ Մենք իբրեւ մեր քաղաքի բոլոր շահագրգռեալներին տեղեկ, խոստովանում ենք, որ չայր Բեգլիանեանցը երբէք չէ հարստացարում և չէ կողոպտում իր ժողովրդին անկողը պահանջներով, նա երբէք չէ թողել միւսն առանց թաղելու, և երկխաբ առանց մկրտելու, հետևաբար և ոչ ոք չէ դիմել մեղանից օտար եկեղեցիին պատկերով, իրանց երեխայը այնտեղ մկրտել տալու և մեռելները օտարագրել քահանային թաղել տալու։ Նա ոչ արեւոյդ է և ոչ թուրք խաղաղող, ուստի և մեր ժողովրդից ոչինչ զանգատ չէ եղել նրա վրա։ այլ ընդհակառակն արժանապատիւ հայրը ինքը գոյով ներսխան դպրոցի ուսումնաւարտ 1867 թւի յառաջագէտ աշակերտներից մէկը, իր արժեւ ընտրութեամբ, վարդ ու բարձրով և հասկացողութեամբ ժամանակի յարմար արժանաւոր հոգեւորականներից մէկը լինելով, սիրելի է բոլոր ժողովրդին, մանաւանդ նրա համար, որ նա չը բաւականաւորով անդուշտ գաւառական արժեքի ուսումնարանում հայոց լեզուի և կրօնի դաստաւութեամբ, մարտի մէկից 1879 թւին մեր եկեղեցու սենեակում սկըսեց դիմել ճարտ պարսկերի մեր գաւառացի հետ և կրկնել տալ տեղիս գաւառական ուսումնարանում իր աւանդած դասերը, որով, ինչպէս նկատում ենք, ցոյց տուեց մեծ յառաջդիմութիւն մարդկին լեզուն ուսուցանելով։ Նաև տեսնելով անդիս գաւառական օրիորդաց ուսումնարանում հայոց լեզուի և կրօնաւարդի պակասութիւնը, այնտեղ ևս յանձնառու եղաւ ձրի շարունակելու իր ուսուցչութեան պաշտօնը, որ մինչ ցայսօր ևս շարունակում է անընդհատ։ Արա յառաջդիմութիւնները տեսնելով վերոյիշեալ ուսումնարանի տեսուչ և հոգաբարձուք սեպտեմբեր ամսին 1879 թւի, խնդրեցով դիմեցին հանգուցեալ Դաբրիէ արքեպիսկոպոսին, որ վերոյիշեալ քահանային վարձատրէ։ Բայց հանգուցեալ արքեպիսկոպոսը, նորին ծայրէթիւնը պատճառ բերելով, թողել է առանց վարձատրութեան։ Մենք կարծում ենք, արքեպիսկոպոսաւոր քահանայի պատուի շոշափողը կամ պէտք է անձանօթ լինի արժանապատիւ վերոյիշեալ քահանայի հետ, կամ թէ չէ թշնամութիւնից և ատելութիւնից ստիպած պէտք է լինի պ. յոգեւորաւորը չայր Բեգլիանեանցի պատուը շոշափելու համար։ Բայց մենք կը հրահանայինք, որ ամեն տեղ Բեգլիանեանցի նման քահանաներ ունենայինք։ Բայց ինչ որ կը վերաբերի Գորու յաջորդ Դրիգոր վարդապետ Գառնապետեանցին, որովհետև չայր սուրբը մի քանի անգամ այցելել է մեզ, միմիկարելով մեզ իր հայրական խրատներով և քարոզներով, որա համար մենք երբ որ լսեցինք Գառնապետեանցի հրաժարական տալը, մենք ինքներս կայարարեց ինդր և զինեցինք Վեհափառ Հայրապետին, որ նրան չարձակէ մեր վիճակի յաջորդութիւնը։ Իսկ եթէ Գորու ժողովուրդը կամենում է կամ չէ կամենում պահել իր յաջորդին, այդ մեզ յայտնի չէ։ Միմիկ միայն Գորու համար են յայտնիներ, Առ այժմ պարզի բաւական է, այստեղեւ թող պ. յոգեւորաւորը որչափ կամենայ գանգատվի չայր Բեգլիանեանցի վերաբերութեամբ։ Իսկական վրա ստորագրեցին, հայերէն լեզուով Դուշեթի քաղաքագլուխ Արաքէմ Մարտիրոսեանց, Սիմեոն Արաքէմեանց, ուսուցչին լեզուով Սարգիս Փանեանց և վրացերէն լեզուով երեսուն և վեց ստորագրութիւններ։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՔ

Այս տարուայ առաջ «Воспитный Сводник» կոչվող զինուորական ամսագրի մէջ տարւում է մի շարք յօդուածների, որոնց վերնագիրն է. «Մի տարի ձիւն վրա»։ Սարայկոյան օֆիցերի յիշողութիւնները 1877 և 1878 թվերին Հայաստանում եղած պատերազմի մասին։ Ն Շէկուր։ (Р. В. Коп.). Воспоминания офицера генералштаба о войне въ Армянъ 1877 и 1878. և

Шекеур.) Այս աշխատութեան մէջ հայազգի գեներալները մասին մեծ հիացմունքով է խօսում, իսկ սեպտեմբեր ամսուայ համարից արդէն սկսվում է գեներալ Լազարովի քաջութիւնների և արած կարգադրութիւնների նկարագրութիւնը նրա Ղարսը առնելու ժամանակ։ Յօդուածի մասնագետ հեղինակը դժուարանում է իրան հաշիւ տալ այն յանդուգն վտանգութեան համար, որը յայտնում էր միշտ հայազգի զինուորը պատերազմի ամբողջ ընթացքում։ Իսկ Ղարսի վրա յարձակվելու գիտելով չամանաւոր գեներալը այնչափ ոգեւորված էր յաղթութեան յոսով, որ երբ, մինչև յարձակումը սկսվելը պտտում էր Ղարսի շուրջը զօրքերի դաւաճութեան վերահստել լինելու համար, փոխանակ սովորական բարեկ, նա ասում էր զօրքին. «Հնորդաւորում եմ ձեր յաղթութիւնը»։ Պ. Շէկուր մեծ գովասանքով է խօսում և հայազգի գեներալ Ալիսաղովի քաջութեան վրա, որին երկրորդ տեղին է տալ և Լազարովից յետոյ Ղարսի յարձակման մէջ մասնակից եղած բոլոր գեներալների մէջ։

Մեծ բաւականութեամբ ենք նկատում Ս. Պետրուրովի ուսում մամուլի մէջ յայտնվող միահաւառ համակրութիւնը հայոց խնդրի վերաբերութեամբ, որի վրա խօսում են գրեթէ ամենքը չը նայելով իրանց ուղղութեան և գոյնի տարբերութեան։ Միեւնի ալ երկուսը ամենին չէ նշարվում Մոսկովայի մամուլի մէջ։ Ժամանակ չէ արդեօր Մոսկովայի հայ ուսանողներին ուշադրութիւն դարձնել այս հանգամանքի վրա, որի պատասխանատուները միայն նոքա կարող են լինել չայ հասարակութեան առաջ։

«Մշակ» № 163 Շուշու նամակի մէջ մի տխուր է մտել, պ. գաւառագետը գիտելով զարդներ քայ անել տալու համար պահանջում է իւրաքանչիւր գիւղի համարակրթիւնից զարդի անունով ոչ թէ 100 լուրի, այլ 700 լուրի։

ՇՈՒՇՈՒՑ մեզ դրում են. անցեալ շաբաթ պատուանի սպանող չարագործները կալանաւորվեցան, դրանք ոչ թէ առաջակներ կամ օտար մարդիկ են եղել, այլ սպանվող պատանուի կողակ ընկերներն են, որոնք լսելով, թէ նա իր ծնողներից փող է ստացել, սպանեցին նրան կողոպտելու նպատակով։

Նրեւում է, որ այժմ Էջմիածինը իր վիճակները կառավարելու մի ուրիշ միջոց է գտել, ամենին առաջնորդներն չը նշանակել, իսկ առաջնորդների ուսման ինքն ստանալ և վիճակները թողնել անտէր։ Թիֆլիսի և Իմերէթի ազգային վիճակը առաջնորդ չունի։ Ղարաբաղի թլմի համար բաւական ժամանակ է առաջնորդ է նշանակված, նրան պահում են Էջմիածնում, իսկ ուսմանը ստացվում է։ Իսկ թող Էջմիածինը մտածէ, թէ Ղարաբաղի վիճակում ինչի են կատարում գիւղական զրգրողների վերաբերութեամբ և շտապէ այդ թլմը առաջ առաջնորդի չը թողնել։

Մեզ խնդրում են յայտնել որ այս օրերս գալու է Թիֆլիս, մեզ մօտ կ'օնջլաւեր տալու համար ուսու յայտնի ջոկժակ ածող, Մոսկովայի Կոնսուլատորայի նախկին պրոֆէսոր Ա. Կ. Բրոքսի, Մոսկովայի Կոնսուլատորայի ուսումնաւարտ աշակերտուհու, օրիորդ Ե. Միսսոնովիի հետ, որ պիտի մի քանի օր անցնէ։

Հոկտեմբերի 20-ին լինելու է Կենդանիների հովանաւորութեան Թիֆլիսի ընկերութեան ընդհանուր ժողովը։ Նիստը սկսվելու է 712 ժամին երեկոյան։ Ընկերութեան անդամները հաւաքվում են շնորհ բերել Գիւղատնտեսական ընկերութեան բնակարանը, Ալ. քանդեւեան այգին, Բարիատինսկի փողոցի վրա։ Մասնաւոր անձիւքն էլ մուտք ունեն։

Լսում ենք որ յայտնի հայ նկարիչ Կ. Արկազովսկի վրդոված լինելով «Գորա» լրագրում Կ. Պոլսից հաղորդած այն տեղեկութեան մասին, որ նա իր պատկերահանդէսը Թէոօսիայում օրհնելու համար յայն քահանային էր հրաւիրել, մի քանի անգամ դիմել է Էջմիածին իր հաւատարմ օրդական վարդապետները, յայտնելով և ցոյց տալով իրան միշտ հարազատ դաւաճ եկեղեցու։ Ամենայն ապացոյց որ կարելի է լինել հարազատ դաւաճ եկեղեցու և մի և նոյն ժամանակ ոչինչ նշանակութիւն չը տալ ազգութեան գաղափարին, այն է որ նոյն երեկի նկարչը, որ իր պարտական համար, ինչպիսի ասում են, ասիկ բան վաճառել է և գալ իւր օրդարեան ծախել անհոն, հաղի համաձայնեց 25 լուրի նուիրել։

Թիւրքաց Հայաստանի սովատանջների օգտին, այն էլ հայ քահանայի հաղար աղաչանքներին զիջելով։

ԱՐՏԱԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐԻՔԻՆ

Լրագիրների մէջ կարգում ենք հետեւալ տեղեկութիւնները Կ. Պոլսից։ Մինչև անգամ ուսու-թիւրքական վերջին պատերազմի սկսվելու ժամանակ Թիւրքաց միւնիստրները այնքան եռանդով չէին զործում, ինչպէս այժմ, ամբողջ գիւղերն են յաղեղվել օղակալ խորհրդակցելով և միմեանց հետ խորհրդակցելով։ Ցաւակցելով կառապանների դրութեանը, որոնք ամբողջ գիւղերն իրանց պարոններին սպանելով, անց են կացնում պարտի առաջը, սուլթանը հրամայեց ներանց իւրաքանչիւրն երեքական ոսկի ընծայել։ «Ահա այսպէս է մեր փառաշահը, պարծենում են Թիւրքերը, նրա ոգրութեանը արժանանում են մինչև անգամ միւնիստրական ծառաները։ Ճշմարիտ շատ ոգրում է Թիւրքերի փառաշահը, որի միւնիստրը հպատակները տարիների ընթացքում տանջանքներից և հարստահարութիւններից կտորվում են։

Թլպէտ պատասխանաւոր միւնիստրները մի կողմից բոլոր ջանքերը դրած են դնում պետութիւնը աղատելու համար, միւս կողմից սուլթանի անպատասխանատու կառավարիչները բոլոր միջոցներով աշխատում են անդունդը գլորել թէ Արդու-Համիլին և թէ նրա պետութիւնը։ Այդ բոլորը ի հարկէ անում են անգլոսակցաբար, կրեց կուրացած, բայց այդ բոլորը նպատակը Թիւրքայի կուրսուն է։

Ջարմանալի է, որ այդ խորագրութիւնները զործողները բոլորն էլ չըբեղենի ազգումը են և այդ հանգամանքը մեկնում է նրանով, որ սուլթանի հարկի մէջ առաջնակարգ տեղ են բռնում երկու չըբեղ գեղեցկուհիներ՝ Աբել-Կալին և Կիսմել-Կալին։ Մերայի այդ կենդանի զարդերը երկու պայտական եղբայրներ ունեն, որոնց միջնորդութեամբ հրահանքներ են ստանում պալատական չըբեղ ինտրիգաներից սուլթանի վրա հարկաւոր կերպով ազդելու համար։

Շարունակութեան "Չ թղթակցեց հաւառում է լեռնաբնակ այն չըբեղներին, որոնք պատճառ են լինում միւնիստրական բոլոր դժուարութիւնների, պահպանելով իրանց աղլուցութիւնը, սուլթանին խաղաղ են դարձնում։ Ինչ տեսակ նախադիւ է հարկն միւնիստրները, զործողութեան ինչ տեսակ պրօքում էլ ներկայացնեն իրանց տիրոջը, արեւի մայր մանուց յետոյ հէնց որ սուլթանը անցնում է կանանցը իր միմիկարիչ հրեշտակների մօտ, ինչպէս հարկն է նախապատրաստված Ալիէ և Կիսմելէ այդ պրօքումները կեդարկում են ամենամանրաւ մասն ջննութեանը, ի հարկէ խանդաւրու նպատակով։ Սուլթանը իր երկու հրեշտակներից նոր մեքեր ստանալուց յետոյ վերադառնում է իր գրասենեակը ասելով. «Կեցցին իմ ամուսինները, ի՞նչպէս է որ դուք հասարակ կանայք, աղբիւրի հանձնարողներ էք յայտնում։» Եւ զրանից յետոյ սուլթանը յայտնում է մեծ վիզիւրն, որ միւնիստրների խորհուրդի վճիռը ոչինչ բանի պէտքը չէ։ Ուրեմն զարմանալի չէ, որ սուլթանը ամենայն օր փոխում է իր միմիկարիչներին, ամենայն ժամ նոր կարգադրութիւն է անում, որոնք այնքան գտտ են, որ հետզհետէ լարում են Լեւոպայի և Թիւրքիայի փոխադարձ յարաբերութիւնները և

որոնց նպատակն է խախտել այն գահը, որի վրա կայանաւորված Մուրադի շահերի հաւատակ բազմած է Արդու-Համիլին։ Դժուար չէ նախադուշակել, թէ ի՞նչ հետեւանքներ կունենան այդպիսի կարգերը Արդու-Համիլին համար, որին հիմիկուց արդէն անուանում են «Արդու-Համիլին» (խեղաղար-Համիլին)։

Նրբի առաջը փոքր ի շատէ պատասխանատու լինելով և տեսնելով, որ իրանց զործողութիւնները անզօր են հարկմական քաղաքականութեան առաջ, Սայիդ-փաշա և նրա ընկերները վճռել են միւնիստրական խորհուրդները շարունակել ամբողջ գիւղերներ, որպէս զի խաղաղին սուլթանի տեսութիւնը չէրքեղեցի սատանաների հետ, որոնք չար ոգիների նման Թիւրքիային անգուհին են դրում։ Ինչ՞ միւնիստրները յոյս ունեն գոնեա այդ ճանապարհով սուլթանի քաղաքականութեան փոքր ի շատէ միջոցաւ։

Քաղաքական այդ արեւոյդութիւնը իր ա ժամաւորութեան համար ստոր համարելով Ալիեմի հպարտ որդի պ. Գօշին, անում են, ինչպէս է իր կառավարութիւնից ազատել իրան յարաբերութիւններ ունենալուց խայտառակ մարդկերանց հետ, որոնք ոչ լօղկա և ոչ պատու են ճանաչում։ Հաւատացնում են, որ բրիտանական զեպանի խնդիրը ընդունված է և նա շուտով Անգլիա կուղորդի այնտեղ մի այլ նշանաւոր պաշտօն ստանալու համար։ Ո՞վ է իմանում, գոցէ պ. Գօշին յաջորդն էլ նրա տեսակետից կը նայի գործին, նոյնպէս կը շուտակ հեռանալ Կ. Պոլսից և այդպիսով անդլիական կառավարութիւնը այնպէս կը վարվի սուլթանի հետ, ինչպէս մի տարի պաշ նա վարվեցաւ եղիպտական խեղիվ Բամբիլ-փաշայի հետ։ Այս հանգամանքը պէտք է ի նկատի առնեն Արդու-Համիլին և նրա խորհրդատուները, մանաւանդ այժմ, երբ միւս պետութիւններն էլ ստիպված կը լինեն պաշտպանել Անգլիայի քայլերը։

Քանի որ ձեռքը մօտենում է, սուլթանը աւելի յանդուգն է վարվում Ներսայի հետ, Այդ հանգամանքը անպատելի չէր, որովհետեւ սարերի մէջ արդէն ձիւն է եկել, ուրեմն էստալիայի և Եգիպտոսի մէջ սահմանների անցկայներ և Հայաստանի մէջ վերահսորդութիւնների մոյցները աներեւակայելի է, որովհետեւ այդ լրկիրների մէջ չափազանց խիստ ձեռք է լինում։ Չ'ընօքօրին էլ Թիւրքիայի շնորհիւ մեծ բարեքների չի հանգւլի, որովհետեւ մինչև Դուշեթի օրը գրաւել չ'ընօքօրիական զօրքերը բաւական կը չարաբլին զրոյերից, վատ եղանակներից և մեծ թւով կը ջարդվեն ապստամբ ալքանցիները։

ՅՈՒՆՍԻԱ

Փարիզից «Նապիօնալ Ցայտունգ» լրագրին հեռագրում են Հոկտեմբերի 8-ից։ Արդարեւ զործողութիւններ, Բարսեղեմի Սեւուրեյր այսօր հաղորդեց միւնիստրների խորհուրդին Անգլիայի այն առաջարկութիւնները, որոնց մասին արդէն երկու օր շարունակ պետութիւնները բանակցում են միմեանց հետ։ Աւստրիական դեսպան Կոմս Բէյստ և գերմանական դեսպան Ցոն-Բալդից այսօր երկու ժամանակ խորհրդակցում էին միմեանց հետ։ Նրանք երկուսը միմեան և յետոյ անգլիական դեսպան լորդ Լայօնս գնացին արտաքին գործերի միւնիստրութիւնը։ Յարանի մասն լրօղիների մեծամասնութիւնը այն կարծիք է, որ ի նկատի ունենալով Անգլիայի առաջարկութիւնները, անհրաժեշտ է գումարել աղբային ժողովները։ Հոկտեմբերի

12-ից նոյն լրագրին հաղորդում են Փարիզից: Այստեղ սպասում են, որ հզուց կը ստացվի պաշտօնական հաղորդում ի նրա վերջին ձևով: Չեմոստորոշված լինելու մասին: Նշանակալից էր սպասել, Գրանտիական լրագրերին մեծամասնությամբ ոչինչ չէ խօսում այն իրողութեան մասին, որ Փարիզից այն և Գրանտիական ներկայացուցիչների ընդհանուր գործողությունները աջողվեցան: Մինչև այժմ միայն ձևերով լրագրերը չեն հաղորդել գերմանական կանցլերին և Գրանտիական արտաքին գործերի մինիստրին: Նրանց աջողությունները Փարիզից ստացված տեղեկություններից կրճատ է, որ այստեղի քաղաքական և կառավարական շրջանն ընդունել են հետևել զգուշ և լազարապետ քաղաքականություն:

Փարիզից հեռագրում են հոկտեմբերի 11-ից: Կապուսինների արտաքինը այսօր դեռ չէր կարգացաւ: Նրեկական նրանք իրանց մի քանի պաշտպաններին հետ փակվեցին Փարիզի վանքի մէջ: Բայց է միայն եկեղեցին, որտեղ երեք կապուսիններ պատարագ էին անում և հաղորդում իրեն բաժանում: Իսկ միւս կապուսինները վանքի առաջը արթնանում էին երգում: Մի քանի թղթակիցներ և հետաքրքրված անձինք մտան եկեղեցին: Բայց դռնապանից և պատարագ անող երեք կապուսիններից այստեղ մնացել են միայն ութ կապուսիններ:

Փարիզից հաղորդում են, որ այստեղ արդէն տպագրվում է Վեդլին գրքը: Իսկապի առնելով որ Գրանտիական պաշտպան Ժորժի շուտ կը գումարեն, այդ գրքի հրատարակումը շատ անհետաճախ էր: Գրքը իր մէջ առանձին յայտնություններ է պարունակի: Գրքը կը բովանդակէ կառավարական դժուրանքներ, որոնք վերաբերում են Բերլինի կոնգրեսից յայն, արեւելեան գործերին, յունական և չերսօ օրինական հարցերին, ծովային ցոյցին և եզրկապական գործերին:

ԱՆԳԼԻԱ

Լոնդոնից Ենեօի թղթ: Պրեսա լրագրին հեռագրում են հոկտեմբերի 9-ից: Անգլիական կառավարությունը անդամներին մէկը յայտնեց, որ կառավարությունը վճռել է առանց տատանման և փոփոխութեան շարունակել այն քաղաքականությունը, որի սկիզբը ծովային ցոյցն է: Անգլիական կառավարությունը յիմարութիւն է համարում եւրոպական պետութիւնների պատերազմը թիւրքիայի հետ, որովհետեւ առաջին կուսից յետոյ բոլորովին կանհետանան թէ ինքը սուլթանը և թէ թիւրքաց ամբողջ նահանգները: Մինիստրը առաց, որ անգլիական կառավարությունը վճռել է այժմ վերջանել գործը, եթէ մինչև անգամ այս կամ այն պետութիւնը յետ կանգնի, որովհետեւ անգլիական կառավարությունը համարում է, որ գործի յետաձգելը կորստաբեր հետեանքներ կունենայ եւրոպական խաղաղութեան համար: Այդ փոստիկ առաջը կարելի է առնել միայն արագ վճարում կան գործողութիւններով:

Հոսմի մէջ հրատարակվող «Կիրիստո» լրագրը ասում է, որ անգլիական կառավարությունը դեռ չէ հաղորդել իր առաջարկությունները իտալական մինիստրութեանը: Որովհետեւ գործերի զրոյթիւնը չափազանց խորհրդավոր է: Այդ իսկ անհրաժեշտ է համարում ձևակերպել այն գործնական առաջարկությունները, որոնց համար կարելի է իրեն եւրոպական կառավարությունների համաձայնությունը ստանալ: Մինչև այժմ եւրոպան կամեւում էր արեւելեան զանազան

հարցերը բաժանված թողնել, յուսարով, որ նրանցից իւրաքանչիւրի համար առանձին վճիռ կը գտնի և այդպիսով կը հեռացնի թէ իր և թէ թիւրքական գործը: Բայց թիւրքական իր վերջին շրջադրականներով ցանկութիւն յայտնեց միաժամանակ զարթոնքներ չերնօգործական, յունական և հայկական խնդիրները և նրանց միասին քննել, իսկ Բ. Գրանտի այդպիսի ընթացքը սուր պնդեց անգլիական կառավարութեանը ժամանակուրդը: Իսկ ընդունալ ընդ որ երեք հարցերին: Թեպէտ մինչև այժմ ոչինչ որոշ վճիռ չէ ընդունված, այնուամենայնիւ երեւի պետութիւնները ստիպողական միջոցներ կը գործադրեն և կիրառորեն իրանց սպասնալիքը, իսկ կանգնելով Կ. Պոլսի մէջ եղած դեպքանքներին: Միւս կողմից հաւանական է, որ պետութիւնները համաձայնեան պաշարելով իր քաղաքական անհրաժեշտները: Նրա իր նահանգները դրանք համար, եւրոպական պետութիւնները կը խանդարեն թիւրքական օգնական գործերը ուղղորդել այդ նահանգները:

ՌԱՍՏԱԿ ՊԱՐԱԿԱՍԱՆԻՑ

Թարգմ. 1 հոկտեմ.

Բանի օր է յարաբերութիւնները Թարգմ. մինչև քրդերի պատմականութեան տեղը բոլորովին կտրված են: Ճանապարհները այն աստիճան երկուդալի են դարձել, որ ոչ ոք անցնել չէ կարողանում: Մեղ հասած վերջին լուրերը յանգում են նրանում, որ Տէյի-Իրազուլայի նորին: Տէյի-Իրազուլայի բոլորը հրտաքինով, ապապատակց պարտից Սովու-Բուլայի, Բինար, Միւնդուր և Մարազլու գաւառները, ոչնչացրել մինչև 170 գիւղեր, կոտորելով չայ և պարսիկ բնակիչներին, առարի առնելով նրանց ունեցածը, և տներին կրակ տալով: Այսպիսի բարբարոսութիւնները դուրս Չինգիս-խանի և Թէյի-Իրազուլայի ժամանակներում պատահած ինքնին: Միւնդուր գիւղաքաղաքի բնակիչները մի քանի չափար չողով պատմաբանական մէջիդ մէջ, մտածելով, թէ վայրենի քրդերը Աստուծոյ տանը չեն մտնու: Բայց քրդերը այրեցին մէջիդ պատմաբանականների հետ միասին: Մարտարդը այն աստիճան տիրել է Ժողովուրդի, որ, որ բոլորը թողնում են իրանց գիւղերը և փախչում են: այդ բարբարոսների առջին: Մարազլուի հայ բնակիչները փախան Քալայ: Քչամու ձուքը բնիկը դո՛ւ է դառնում սրի և կրակի: Քրդերին հաւատարմ չափով ատելի են որքան քրիստոնեայ չայեր, նոյնքան մահապաշտական պարսիկները, որովհետեւ այս վերջինները պատկանելով շիա յղանակին, ոչ միայն չեն ընդունում, այլ չողովում են Օմարին, Օտմանին և Արաբներին, որոնք Թարգմ. քրդերին նոյնպէս առհասարակ բոլոր ստեղծների համար պաշտելի խալիֆաներ են, և համարում են Մահմեդի առաջին յաջորդները: Միւնդուրի չայաբանի թուրքները քրդերին և պարսիկներին մէջ հանում է սարսափելի մոլեռանդութեան:

Բոլորովին գործնական է թուում, երբ մարդ մտածում է, թէ ինչպէս մի քուրդ հոգեւորական, որպիսին Տէյի-Իրազուլայի է, ի շուրջը հաւաքած մի քանի չափար առաջակներ, կարողանում է համարձակ մուտք գործել պարսից պետութեան մէջ, կարողանում է անպատակել ամբողջ գաւառներ և մինչև անգամ յարձակվում է քաղաքների վրա: Այդ յաջողութիւնը պէտք է վերաբերել ոչ այնքան քրդերի քաղաքները կամ նրանց ճարպիկութեանը, առաջակութեան մէջ, որքան պարսից կրկին այս և այն պայմաններին, որոնք գիւղացիներն են առաջակներին յաջողութիւն գտնել իրանց գործողութիւնների մէջ:

Պարսից կառավարութիւնը սովորութիւն չունի իր գործերը միշտ պատրաստ պահել զինուորանոցներում, կերակրել և չափեն նրանց: Բաղադրութեան ժամանակ, խնայողութեան համար, կառավարութիւնը իր զինուորներին արձակում է իրանց տները, պարսպապետ իրանց անտեսութիւնով, և կրկին հաւաքում է նրանց այն ժամանակ միայն, երբ պէտք է զոհում կամ երբ սպառնում էր որ և կցէ վտանգ: Բայց դրանից, այժմ Ստրպպապալայի գործերի մեծ մասը տարված են հեռու, Երասանի կողմերը: Այդ բոլորից հասկանալի է, որ Տէյի-Իրազուլայի քուրդ հրտաքինները մտնելով Ստրպպապալայ, պիտի գտնեն իրանց առջև ամբողջ

կրկին անպահապան և առանց զինվա՛ր ուժերի: Ուրեմն, բոլորովին դարձնալի չէ, որ նրանք մի քանի օրվայ մէջ անցան Ուրմիյ լճակի արեւելա-հիւսիսային ափերը, և իրանցարից սկսեալ մինչև Բինար, մինչև Մարազլու, ոչնչացրին 170 գիւղեր և յարձակվեցան մինչև անգամ քաղաքների վրա:

Քրդերի արշաւանքները նոր լան չեն այս կողմերում: Պարսիկ թուրքական սահմանի գծի մօտ գտնված երկրներում, սկսեալ Հին-Բայազէդից մինչև Սինէ, այդ աշաղին տարածութեան վրա, որ թափառում են քուրդ էջիւրախները, որոնց անհնգատ անպատակութիւնները ի վաղուց անտի այն աստիճան սովորական են դարձել, որ ոչ ոք չէր ուզար իրեն չէր դարձնում նրանց վրա: Դառնալով որ, մինչև այժմ կառավարված անպատակութիւնները ունեն կառարեալ առաջակային բնաւորութիւն: Իսկ Տէյի-Իրազուլայի այժման արշաւանքների մէջ երևում է թափառ մի խորին քաղաքական նպատակ:

Այդ նպատակը աւելի բացայայտ կացուցանելու համար են ստիպված են մի քանի ժամանակներում թիւրքները մէջ մտնել: Մինչև այսօր որքան պատահել են քրդերի անպատակութիւններ, երբք չէ պատահել, որ Թիւրքիայի քրդերը միանային Պարսկաստանի քրդերի հետ և միասին գործէին: Սովորաբար այսպէս էր լինում: Կամ պարսից բերդերը անցնում էին թիւրքաց հողի վրա, կողպատում էին ու յետ դառնում, կամ թիւրքաց բերդերը անցնում էին պարսից հողի վրա: Այս և նոյն անկարգութիւններն էին անում: Նրանք կողպատում էին առանց խտրութեան գնեւա ազգերի և կրօնների մէջ, կողպատում էին մինչև անգամ իրանց գեղակիցներին՝ քուրդը: Եւ որովհետեւ այդ արշաւանքները տնեին լոկ առարառութեան նպատակ, այդ պատճառով, կողպատելով մի երկիր, նրանք կայմակի արագութեամբ անցնում էին, առանց մտնելու քաղաքների և առանց կանգ առնելու մի տեղ:

Իսկ այժման երևույթները ուրիշ նպատակ են երևան հանում: Եւ այդ նպատակը աւելի խորհրդարան կերպարանք կը ստանայ, եթէ զննենք, թէ ինչպէս կազմվեցան քրդերի այսօրվայ միութիւնը, որի մասին այնքան մեծ փափագով մտածում էին Բ. Վուտը և Կ. Պոլսի թիւրք ժամուրդ:

Եւ քրդերի այժման շարժումը մի քանի ասիա առաջ Տէյի-Իրազուլայի աղէտները, ծրարեալ կերպով շրջում էին Պարսկաստանի, Ռուսաստանի և Թիւրքիայի սահմանների վրա ցրված բերդի դեղերի մէջ, ման անելով իրանց հետ Տէյի-Իրազուլայի կերպում մի մի դժբախտ, և մեծ մարդարի սուրբ գրքի անտեղ կրող և խոստում էին առնում քրդերի ցեղակիցներ իր մասնակցելու մի ընդհանուր քրդական անպատակութեան: Ինչ նպատակով, այդ յայտնի էր միայն Տէյիին, որը սուրբ է, անսխալական է, որի մօտ պահված են մեծ մարգարէի տօրթոթութեան գաղտնիքները:

Մինչ Տէյիի աղէտները դանաղան երկիրներում վառում էին քրդերի ֆանատիկությունը, Համդա-աղան, մանգուրների ցեղապետ, Կ. Պոլսում Աբդուլիս փաշայի հետ կազմում էին անպատակութեան ծրագիրը: Իմ նախընթաց նամակում են արդէն ցոյց էի տուել, թէ ինչպէս այդ խորամանկ ծրագիրը, Համդա-աղան, վերադառնալով Կ. Պոլսից պարսից Սովու-Բուլայի քաղաքը, նախապատրաստեց տեղային քրդերին, որոնք միանայով Տէյի-Իրազուլայի թիւրքացական քրդերի հետ, անպատակութեան սկիզբը դրեցին: Բուսաց քրդերը դեռ ևս չէր կարողացան մասնակցել իրանց ցեղակիցների շարժումներին, ի չարիք այն պատճառով, որ ռուսաց կառավարութիւնը այնքան անհոգ չէր, որ թող տար իր նպատակը քրդերին միասնապէս օտար քրդերի հետ:

Ի նկատի առնելով այն զգալիությունը, որ կապում էր Բ. Վուտը, և որի նպատակն էր ցոյց տալ եւրոպային մի քրդական միութիւն և նրանով խեղդել հայկական խնդիրը, ինքն ըստ ինքեան ծագում է մի չարք: Ինչու թիւրքական փոխանակ Հայաստանում սկսելու Պարսկաստանի մէջ յարուց քրդերի անպատակութեան: Այդ հարցը պարզվում է Թարգմ. թիւրքաց հիւպատոսի և թէհրանի թիւրքաց զեպանի պատմականներով, որ տուեցին պարսից կառավարութեանը, երբ այդ վերջին նրանցից բացատրութիւն պահանջեց քրդերի անպատակութեան մասին: Թիւրքիայի այդ ներկայացուցիչները բոլորովին իրանցից հեռացրին ամեն պատմականատեղութիւն, յայտնելով, թէ միայն պարսից քրդերն են անպատակածները, և այդ անկարգութիւնները չեն վերաբերում Թիւրքիային: Թէ որ աստիճան զիջումատական ալ ժլքունի այդ պատմականը, ինքն ըստ ինքեան

հասկանալի է: Միայն այժմ յայտնի իրողութիւնը ծածկել անհնար է, բաւական է միայն, որ անպատակների գլխաւորը Տէյի-Իրազուլայն է, որի բնակութեան տեղը Ներին է, թիւրքաց հողի վրա, բացի դրանից, անպատակներին առանցքում է Տէյի-Իրազուլայի որդի Տէյի-Իրազուլայի, և անպատակների մեծ մասը թիւրքացական քրդեր են, որ անցել են պարսից հողի վրա:

Մեղ լուրեր են հասնում, թէ Տէյի-Իրազուլայի արդէն յայտնել է իրան քրդերի խալիֆայ, և որպէս մարգարէի հոգեւոր և աշխարհական յաջորդ պիտի շինվէ մի քրդական պետութիւն, տիրելով Պարսկաստանի, Թիւրքիայի և Ռուսաստանի իշխանութեան տակ գտնվող բոլոր քրդական գաւառներին: Թէ որքան ծիծաղելի են այդ չնայողները, չառ պարզ է: Այդ հասարակ գերվիշի որդին մինչև անգամ իր ծագումը հասցնում է Սէֆէվի թագաւորների տոհմին, և ինքը մարգարէն իր երազի մէջ խոստացել է նրան շնորհել Սէֆէվիների կորցրած երկիրները...

Եւ չեմ ուրանում այն աշաղին աղեղեցութիւնը, որ այդ հոգեւոր-առաջակը ունի քրդերի մեծ մասի վրա, բայց հարկաւոր են համարում նկատել, որ Պարսկաստանում նրա այժմ կատարած բարբարոսութիւնները դրամայի առաջին գործողութիւնն է, իսկ երկրորդ գործողութիւնը կը ներկայացվի թիւրքաց Հայաստանում: Պարսից կառավարութեան այժմ ձեռք առած միջոցներից պարզ երևում է, որ նա շուտով յետ կը մեղ քրդերին իր երկրից: Այն ժամանակ Տէյի-Իրազուլայի իր դաւաճաբարոյ ճիտակներով կը թողնէ պարսից երկիրը և անց կը կենայ թիւրքաց հողի վրա: Հայաստանում կը սկսվի կոտորածը և այդ իսկ նպատակով կազմված են Տէյիի ճիտակները: Բայց ինչու մէկ պիտուր դադարեց, որ նախ Պարսկաստանում է սկսվում կոտորածը, իսկ յետոյ անցնում է թիւրքաց Հայաստանում:

Շատ պարզ է, երբ Հայաստանում կը սկսեն չալերին կոտորել, երբ ձայնը կը հասնի Եւրոպային թիւրքաց կառավարութիւնը շատ հաւանական անպաշտպան կունենալ իրան արդարացիները, լաւելով, ևս մեղաւոր չեն այդ Պարսկաստանի քրդերն են, որ եկել են իմ երկրում կոտորածներ են անում, ևս այնքան ուժ չունեն, որ կարողանան նրանց դապել... Իսկ Պարսկաստանի և Թիւրքիայի քրդերին բաւական դժուար է որոշել միմեանցից, նրանք հաստատ բնակութիւն չունեն, այլ որպէս թափառական ժողովուրդ, այսօր Պարսկաստանում են, միշտ օրը նրանց կը տեսնէք Թիւրքիայում: Սահմանի գիծը նրանց համար մի ապագա կամուրջ է, որի վրայով անդադար անցուղարձ են անում:

Բանի օր գործերը այդ դրութեան մէջ են, քանի որ թիւրքաց չայերին սպասում է մի օրհասական հարուած, որ յաւիտեան պիտի վերջ դնէ նրանց գոյութեանը, իմ կարծիքով, թիւրքաց չայերին ուրիշ ոչինչ չէ մնում, բացի նրանցից, որ իրանք հող տանեն իրանց ան ձև ապաշտպանութեան համար, եթէ չեն ցանկանում իսպառ ոչնչանալ և ջլջլի աշխարհի երեսից:

«ՄԵԱՎԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ ՄԻՋԱԶԳԱՑՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՒՆՑ

ՓԱՐՔ, 12 հոկտեմբերի: Բարեկեցիկ Սենտ-Իլիւ ներկայացրեց մինիստրների խորհուրդին հեռագրներ, որոնք հաղորդում են Կոլոնիի նիօի յանձնելը չեմոստորոշված լինելու, որ երկու օրվայ մէջ կը կատարվի:

Ս.ՔԵՆԷ, 13 հոկտեմբերի: Կազմվեցաւ մինիստրութիւն Կոմանդուրոսի առաջնորդութեամբ:

Կ. ՊՈԼԻՍ, 15 հոկտեմբերի: Դաշնագրութեան հաստատելը Կոլոնիսեօ Չեմոստորոշված յանձնելու մասին կարելի է սպասել էրէյ:

ԼՈՆԴՈՆ, 14 հոկտեմբերի: Կարծում են, որ Կարդիֆ մէջ անկախութիւն է տիրում Լուր է տարածված, որ Արդուրալման սպանված է:

Ս. ՊԵՏԵՐՈՒՐ, 14 հոկտեմբերի: Փրապիտ Վեստի լրագրին ինքապաշտպան հոկտեմբերի 13-ից հաղորդում են: Փաշալար Կայսրը հանդէս կատարեց Կարաբիքցիների փոսային: Լիվալիա նաւը փոթորկի ժամանակ հեղանքների Գլին դիպաւ ժայռերին, ծակեցաւ և ցուրը նրա մէջ մտնում է: Նախ վերանորոգելը նրան մի քանի օրը կը պահէ ձիւօրի մէջ և այնուհետեւ նա կը շարունակի իր ձանապարհը:

Խմբագիր: Գրասարկալից ԿԻՍԿՈՒ ԱՐԴՈՒՆԻ

